ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 մարտի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

35
(3244)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹԵՐԹԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ ՎԵՐՔԻՆ ՇՈՒՆՉԸ

Երբ Նիկոլ Փաշինյանը դեռ խմբագիր էր, թերեւս լավ գիտեր՝ տպագիր մամուլը միայն լրատվամիջոց չէ, այլ նաեւ ինստիտուտ է՝ հանրային վերահսկողության, կարծիքների բախման, արխիվի, քաղաքական հիշողության: Բայց այսօր, արդեն վարչապետի կարգավիճակում, հենց նրա իշխանությունն է հերթական հարվածը հասցնում տպագիր մամուլին՝ այն էլ ոչ թե շուկայական մրցակցության, այլ օրենսդրական միջամտությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մարտի 25-ին Ազգային Ժողովում առաջին ընթերցմամբ քննարկվել է Կառավարության հեղինակած «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» եւ կից օրենքներում փոփոխությունների փաթեթը, որով առաջարկվում է հանել ծանուցումներն ու այլ փաստաթղթային հրապարակումները տպագիր մամուլում պարտադիր հրապարակելու պահանջը՝ այն փոխարինելով «azdarar.am» պաշտոնական կայքում կամ համապատասխան կազմակերպության ինտերնետային էջում հրապարակմամբ: Նախագծի զեկուցող, արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը բացատրել է, թե գործող մեխանիզմն այլեւս արդյունավետ չէ, միաժամանակ առաջացնում է զգալի ծախսեր: Այս մոտեցումը նույնությամբ ներկայացվել է նաեւ խորհրդարանական քննարկման հրապարակային հաղորդագրություններում:

Իշխանությունն, ըստ էության, ասում է՝ թերթը հնացած է, թերթը այլեւս պետք չէ: Այստեղ կա մի նուրբ, սակայն չափազանց կարեւոր հանգամանք. պետությունը պարզապես տեխնիկական լուծում չի փոխում, այլ վերացնում է տպագիր մամուլի գոյատեւման այն աղբյուրներից մեկը, որն առնվազն տարիներ շարունակ օգնում էր թերթերին պահել տնտեսական նվազագույն կենսունակությունը: Այսինքն՝ խոսքը միայն ծանուցման ձեւաչափի մասին չէ. խոսքը լրատվական դաշտից տպագիր մամուլի ֆինանսական հենակետերից մեկը հանելու մասին է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ դատախազությունը «Հետք»-ի հրապարակումն ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես տեղեկացավ, որ Առինջի կառուցապատման աղմկահարույց գործով ստուգողական գործողություններ են ընթանում. «մակուլատուրան ստուգվում է»: «Ժողովուրդ»-ը տեղեկացրել էր, որ ՀՀ դատախազությունը «Հետք»-ի հրապարակումը, որը վերաբերում է Առինջում կառուցված շենքերի եւ առանձնատների գործին, ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթի ընթացքը լուծելու նպատակով: Խոսքը վերաբերում է այն աղմկահարույց պատմությանը, որի շրջանակում բացահայտվել էր Առինջում կառուցապատված թաղամասի կոռուպցիոն շղթան: Ըստ հրապարակման՝ Առինջում «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի կառուցած թաղամասում ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը դեռեւս 2025 թվականի դեկտեմբերին մատչելի պայմաններով ձեռք էր բերել բնակելի տուն՝ թաունհաուս: Ուշագրավն այն է, որ Կոնջորյանը գույքը ձեռք էր բերել շուկայականից եւ նույնիսկ կառուցապատողի հայտարարած գնից էժան՝ մեկ քառակուսի մետրի համար վճարելով ընդամենը 300 հազար դրամ, այն դեպքում, երբ վաճառքի հայտարարված գինը կազմել էր 420 հազար դրամ:

⇨ *էջ 3*

Նանե Ղազարյանը Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ է նշանակվել 2025 թվականի մարտի 11-ին: Մինչ այդ, ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքից, նա 2023 թվականի օգոստոսից մինչեւ 2025 թվականի մարտ զբաղեցրել է Կադաստրի կոմիտեի իրավաբանական վարչության պետի պաշտոնը: Սակայն ուշագրավ է, որ այդ ժամանակահատվածի համար նրա գույքի եւ եկամուտների հայտարարագրերը հրապարակված չեն: Ներկայացվածը հանդիսանում է պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ հայտարարագիր: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց հայտարարագիրը եւ արձանագրեց հետեւյալ պատկերը: Նանե Ղազարյանը հայտարարագրել է Երեւանում մեկ բնակարան, որը գտնվում է նրա փաստացի տիրապետման ներքո՝ 90 եւ ավելի օր: Նա ունի նաեւ 2012 թվականի արտադրության TOYOTA մակնիշի ավտոմեքենա, որը եւս հանդիսանում է 90 օր եւ ավելի տիրապետվող տրանսպորտային միջոց: Պաշտոնյան ունի բաժնեմաս, որը ձեռք է բերել 2020 թվականի հունիսի 2-ին՝ 50,000 դրամ արժեքով: Նրա բանկային հաշիվներում առկա է 425.39 դոլար եւ 684,390 դրամ, էլեկտրոնային հաշվում՝ 540 դրամ, իսկ կանխիկ՝ 3,450 դոլար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ապրիլի 2-ից էկրան կբարձրանա «Առաջին Քրիստոնյա պետություն» անվանումը կրող ֆիլմ: Այն ստեղծվել է ռուսաստանաբնակ հայ գործարար ու բարերար Արթուր Սողոմոնյանի ֆինանսական ներդրման շնորհիվ: Եռալեզու (հայերեն, ռուսերեն ու անգլերեն) ֆիլմը պատմում է 4-րդ դարասկզբի պատմական իրադարձությանը նախորդած ու հաջորդած դեպքերի մասին: Խաղարկային փաստավավերագրական ֆիլմի նպատակն է հատկապես ռուսալեզու եւ անգլալեզու տիրույթում ներկայացնել հայկական պատմությունն ու մշակույթը, դրանով իսկ նպաստել հայկականության տարածմանն աշխարհում: Մեզ հաջողվեց կապ հաստատել Արթուր Սողոմոնյանի հետ, ով նշեց, որ հայկական մշակույթի տարածման գործում իր ու իր ընկերների ջանքերը շարունակվելու են, եւ այս ֆիլմին հաջորդելու են պատմական մոտիվներով նկարահանվող այլ ֆիլմեր եւս, օրինակ՝ 451թ.-ի Վարդանանց պատերազմի ու այլ պատմական շրջանների մասին:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՆ ՏԵՆՉՈՒՄ»

ArmLur.am-ը զրուցել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հետ:

-Պարոն Ալեքսանյան, Նիկոլ Փաշինյանն օրերս հայտարարեց, որ եթե ինքը չընտրվի, ապա սեպտեմբերին պատերազմ է լինելու: Այս հայտարարության ենթատեքստը ո՞րն է: Որտեղի՞ց ձեզ այդ տեղեկությունը:

-Ենթատեքստն այն է, որ ընդդիմադիր ուժերը ակնհայտորեն պատերազմ են տենչում, եւ նրանց համախմբումը պետք է անվանել պատերազմի կուսակցություն: Դուք չե՞ք լսում նրանց հայտարարությունները, երբ ասում են, որ պետք է ռեւիզիա անեն խաղաղության համաձայնագիրը, երբ ասում են, որ պետք է ռեւիզիա անեն TRIPP համաձայնագիրը, երբ ասում են, որ TRIPP-ի վրա պետք է բերեն չինական կամ ռուսական երաշխավորություն: Այդ ամեն ինչը պատերազմի ուղիղ տեքստ է:

-Իսկ ԱՄՆ-ից վտանգներ չե՞ք տեսնում: ԱՄՆ-ն Իրանի համար թշնամական պետություն է: Իրանի քաղաքական գործիչները նշում են, որ Իրանը բարեկամական հարաբերություններ ունի ՀՀ-ի հետ, սակայն Հայաստանը հայտնվում է ԱՄՆ-ի եւ Իրանի նման թշնամական պետությունների արանքում: Սա վտանգավո՞ր չէ Հայաստանի համար:

-Այսինքն՝ նկատի ունեք Իրանը Հայաստանի տարածքը ի՞նչ անի՝ռմբակոծի՞:

-Վտանգներ չե՞ք տեսնում:

-Չէ, չեմ տեսնում, որովհետեւ մենք ունենք փայլուն հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, մենք ունենք փայլուն հարաբերություններ Իրանի հետ, եւ դա մեր դիվանագիտության շնորհիվ է: Հենց դա է ճիշտ դիվանագիտությունը, հենց դա է ճիշտ արտաքին քաղաքականությունը՝այո, աշխարհում, նույնիսկ եթե պատերազմ լինի, ինչի համար մենք շատ ցավում ենք եւ աղոթում ենք, որ բոլոր պատերազմները, բոլոր մարտական գործողությունները հնարավորինս շուտ ավարտվեն:

-Ընդդիմությունը պատերազմի մասին չի խոսում, նրանք պնդում են, որ պետք է արժանապատիվ խաղաղություն լինի:

-Երբ որ տարածքային պահանջներ են ներկայացնում Թուրքիայից, դա ինչի՞ մասին է: Խաղաղությա՞ն մասին է: Թուրքիայից տարածքային պահանջներ ունենալը պատերազմի՞ մասին է, թե՞ խաղաղության, երբ որ ասում են՝Արարատը մերն է:

-Պարոն Ալեքսանյան, հրաժարվե՞նք հայ ժողովրդի պատմությունից:

-Պատմականորեն Ուրմիո լիճն էլ է մերը եղել: Հիմա ի՞նչ անենք: Ասենք՝ Ուրմիոն մերն է, Իրանին ասենք՝ այ նվաճողներ, Ուրմիո լիճը իր հարակից տարածքներով մերն է, մեզ տվեք, Վրաստանին ասենք՝Ջավախքը մերն է՝տվեք, Ադրբեջանին ասենք՝ Ղարաբաղը, Նախիջեւանը մերն է՝ տվեք, Թուրքիային ասենք՝ Արեւմտյան Հայաստանը տվեք: Սա՞ է խաղաղությունը:

-Դուք էիք այդ նույն Ղարաբաղում, նույն Շուշիում պարում: Ստացվում է՝ դուք այլ երկրի տարածք ապօրինաբա՞ր եք հատել:

- Հիմա պնդում եք, որ այս չորս պետություններից այդ չորս տարածքային պահանջները ներկայացնենք: Ես հայտնում եմ, որ չպետք է մեր չորս հարեւան պետություններից տարածքային պահանջներ կայացնենք: Դա ինքնասպանություն է:

-Դուք ասում եք, որ Արարատը հայ ժողովրդինը չէ:

-Այսինքն՝ ձեզ համար նորությո՞ւն է, որ Հայաստան-Թուրքիա սահմանը այնպես է անցնում, որ Արարատը սահմանից այն կողմ է լինում: Դա ձեզ համար նորությո՞ւն է: Այդպիսի ՞աշխարհ եմ հիմա ձեզ համար բացահայտում: Ուզո՞ւմ եք մի հատ նոր շոկային նորություն ասեմ. երկրագունդն էլ կլոր է: Ինձ թվում է, դա ավելի շոկային է:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ՄԱՐԴԻԿ ՉԵՋ ԵՆ ԴԵՄ»

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանը տելեգրամյան գրառում է կատարել. «Առաջին նկարում «Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացու անձնագիրն» է՝ 2020 թվականին իշխանությունների կողմից նախաձեռնված, սակայն հետո չեղարկված Սահմանադրական հանրաքվեի «Այո»-ի բուկլետը: «ՀՀ հպարտ քաղաքացու անձնագրի» վրա պատկերված էր Հայաստանի քարտեզը՝ Արցախի հետ միասին, եւ երբ այդ բուկլետները քարոզարշավի շրջանակներում բաժանվում էին քաղաքացիներին, տեղի ունեցավ հայտնի դեպք. Նիկոլ Փաշինյանը մետրոյում (ամեն անգամ էլ ավելի ենք համոզվում, որ Փաշինյանին մետրոն հակացուցված է) այդ բուկլետը տվեց մի երիտասարդ աղջկա, որն էլ վերցրեց ու պատռեց այն:

Երկրորդ նկարում՝ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ ՔՊ-ի կողմից կիրառվող քարոզչական գործիք դարձած կրծքանշանն է՝ ՀՀ քարտեզի տեսքով: Վերջերս էլ Ալեն Սիմոնյանը, նեղացած երեխայի պես, բողոքում էր Փաշինյանին, թե քաղաքացիներից մեկը վերցնելով այդ կրծքանշանը՝ կոտրել ու գցել է գետնին: Ասում էր՝ մեզ կարող են չսիրել, բայց ինչպե՞ս կարելի է անարգել մեր պետության քարտեզը:

Մեր պետության քարտեզը հենց դուք եք անարգում՝ այն դարձնելով ձեզ համար քարոզչական գործիք: Մարդիկ ոչ թե մեր պետական խորհրդանիշներին են դեմ, այլ ձեզ եւ ձեր վարած խայտառակ քաղաքականությանը: Մեր պետական եւ ազգային խորհրդանիշներին ձեռք մի տվեք. ձեր դեմքերով բուկլետներ ու կրծքանշաններ պատրաստեք, որ մարդիկ էլ հանգիստ սրտով գցեն գետնին կամ պատռեն եւ դա չլինի մեր սրբությունը: Հայաստանի քարտեզը եւ մեր սրբագույն սիմվոլները հանգիստ թողեք, իսկ կոնկրետ քարտեզի մասով՝ ամեն անգամ, երբ դրան դիպչում եք, այն քառակուսի կիլոմետրերով փոքրանում է»:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԽՄԲԱՔԱՆԱԿ

Ադրբեջանի տարածքով Հայաստան է ուղարկվել ռուսական հացահատիկի հերթական խմբաքանակը: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Հայաստան է ուղարկվել 5 վագոն հացահատիկ (350 տոննա): Գնացքը Վրաստանով կհասնի Հայաստան:

Ավելի վաղ Ադրբեջանի տարածքով Հայաստան էր ուղարկվել 4 վագոն պարարտանյութ (271 տոննա) եւ 1 վագոն հնդկաձավար (68 տոննա): Իսկ դրանից առաջ նույն ճանապարհով Հայաստան էր ուղարկվել ավելի քան 23 հազար տոննա հացահատիկ եւ ավելի քան 700 տոննա պարարտանյութ:

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը Հունաստանի Անկախության օրվա առթիվ ընդունել է Հայաստանում Հունաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Խրիստոս Սոֆիանոպուլոսին: Ողջունելով նրան՝ նախագահն՝ ի դեմս դեսպանի, շնորհավորել է Հունաստանի ղեկավարությանը եւ բարեկամ ժողովրդին ազգային տոնի կապակցությամբ՝ ընդգծելով, որ երկու երկրների հարաբերությունները առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում: Նա նշել է, որ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված կապերը ունեն դարավոր պատմություն եւ հիմնված են փոխադարձ վստահության, համակրանքի ու դժվարին պահերին միմյանց աջակցելու պատրաստակամության վրա: Իր խոսքում դեսպան Սոֆիանոպուլոսը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար՝ նշելով, որ Հայաստանի հետ հարաբերությունները Հունաստանի համար ոչ միայն պատմական ժառանգություն են, այլեւ ժամանակակից համագործակցության կարեւոր ուղղություն: Նա ընդգծել է, որ վերջին տարիներին երկկողմ կապերը նկատելիորեն ակտիվացել են՝ ընդգրկելով նոր ոլորտներ եւ ստեղծելով համագործակցության նոր հնարավորություններ:

Հանդիպման ընթացքում կողմերը հանգամանալից անդրադարձել են երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարներին՝ առանձնացնելով մի շարք առաջնահերթ ոլորտներ: Մասնավորապես, քննարկվել են քաղաքական երկխոսության խորացման, տնտեսական կապերի ընդլայնման, ներդրումային ծրագրերի խթանման, ինչպես նաեւ մշակութային եւ կրթական փոխանակումների ակտիվացման հարցեր: Կարեւորվել է նաեւ բարձր տեխնոլոգիաների եւ պաշտպանության ոլորտներում համագործակցության ընդլայնումը՝ հաշվի առնելով առկա ներուժը եւ փոխադարձ հետաքրքրությունը:

Կողմերը հատուկ շեշտադրել են, որ երկու երկրների միջեւ համագործակցությունը զարգանում է կայուն եւ հետեւողական կերպով՝ անկախ արտաքին հանգամանքներից: Ընդգծվել է, որ այդ առաջընթացի հիմքում ընկած է ոչ միայն պետական մակարդակի փոխգործակցությունը, այլեւ ժողովուրդների միջեւ ձեւավորված ամուր բարեկամությունն ու փոխադարձ շահերի համադրումը, որոնք լրացուցիչ խթան են հանդիսանում նոր նախաձեռնությունների կյանքի կոչման համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային զարգացումներին: Կողմերը քննարկել են առկա մարտահրավերները եւ կարծիքներ փոխանակել դրանց արդյունավետ դիմակայելու հնարավոր ուղիների վերաբերյալ՝ կարեւորելով համագործակցային մոտեցումների դերը: Նշվել է, որ այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը, երկարաժամկետ կայունության ապահովումը եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, որոնք կարող են նպաստել տարածաշրջանում կանխատեսելի եւ անվտանգ միջավայրի ձեւավորմանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՉԻ ՈՒԶՈՒՄ «ԿՐԿԻՆ ԽԱԲՎԵԼ»

Իրանի ղեկավարությունը կարծում է, որ Իսլամաբադում բանակցություններ անցկացնելու ԱՄՆ-ի առաջարկը կարող է խորամանկություն լինել, մարտի 24-ին հաղորդել է Axios-ը՝ հղում անելով աղբյուրներին:

Իրանի ներկայացուցիչները Պակիստանի, Եգիպտոսի եւ Թուրքիայի միջնորդներին ասել են, որ Մերձավոր Արեւելք ամերիկյան զորքերի տեղակայումը «ուժեղացրել է նրանց մտավախությունը, որ խաղաղության բանակցությունների առաջարկը կարող է խորամանկություն լինել»:

Ինչպես հաղորդում է Axios-ը, Իսլամական Հանրապետության ներկայացուցիչները նշել են, որ «չեն ուզում կրկին խաբվել», քանի որ անցյալ տարվա հունիսին եւ այս տարվա փետրվարի 28-ին Իրանի վրա հարձակումները տեղի են ունեցել բանակցային գործընթացի կեսին: Պորտալը նշում է, որ ԱՄՆ-ը, որպես բանակցությունների հիմք, դիտարկում է Իրանին տրված հակամարտությունը դադարեցնելու 15 կետանոց ծրագիրը:

Axios-ի փոխանցմամբ՝ ԱՄՆ վարչակազմի պաշտոնյաները հույս ունեն պարզել, թե արդյոք Թեհրանը պատրաստ է զիջումների գնալ, որոնք նա չէր ցանկանում անել նախորդ բանակցությունների ժամանակ:

ՄԵՂԱԴՐԵԼ Է

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը չորեքշաբթի Իսպանիայի կոնգրեսում ելույթ ունենալիս քննադատել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունները Իրանի նկատմամբ՝ դրանք բնութագրելով որպես «անարդար եւ անօրինական պատերազմ»:

Սանչեսը, ով վաղուց է հանդես գալիս պատերազմի հակառակորդ դիրքորոշմամբ, ասել է, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը «խախտել են միջազգային իրավունքը, ապակայունացրել Մերձավոր Արեւելքը եւ նորից հրահրել հակամարտություններ Իրաքում եւ Լիբանանում»:

Իսպանացի առաջնորդը նաեւ ընդգծել է, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը «անվտանգության սպառնալիքի տակ դրել են ծովածոցային երկրների պետությունները», որոնք արագ դարձան խոցելի ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի եւ Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուի որոշումների պատճառով:

Սանչեսը ԱՄՆ-ին ու Իսրայելին մեղադրել է նաեւ այն բանի համար, որ նրանք հարմար առիթ են ստեղծել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համար՝ Ուկրաինայում իր լայնածավալ ներխուժման ընթացքում, նշելով, որ Ռուսաստանը շահում է վառելիքի գների աճից եւ մեղմացված պատժամիջոցներից, որոնք նույնպես պայմանավորված են ԱՄՆ-ի վարչակազմի որոշումներով:

Իսպանիան շարունակել է պայքարել ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունների դեմ՝ հրաժարվելով թույլ տալ ԱՄՆ-ին օգտվել իր Ռոտա ծովային եւ Մորոն ավիաբազաներից, որոնք գտնվում են Անդալուսիայի շրջանում: Ներկայացվող իրավիճակը Թրամփին ստիպեց քննադատել Իսպանիային՝ ասելով, որ այն «չունի մեծ առաջնորդություն» եւ պահանջել «ընդհանրապես դադարեցնել առեւտուրն Իսպանիայի հետ»:

ՆՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ, ՆՐԱ ՄՈՐ ՈՒ ՔՐՈՋ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ԳՈՐԾԸ

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՀՀ դատախազությունը «Հետք»-ի հրապարակումն ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես տեղեկացավ, որ Առինջի կառուցապատման աղմկահարույց գործով ստուգողական գործողություններ են ընթանում. «մակուլատուրան ստուգվում է:

«Ժողովուրդ»-ը տեղեկացրել էր, որ ՀՀ դատախազությունը «Հետք»-ի հրապարակումը, որը վերաբերում է Առինջում կառուցված շենքերի եւ առանձնատների գործին, ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթի ընթացքը լուծելու նպատակով:

Խոսքը վերաբերում է այն աղմկահարույց պատմությանը, որի շրջանակում բացահայտվել էր Առինջում կառուցապատված թաղամասի կոռուպցիոն շղթան: Ըստ հրապարակման՝ Առինջում «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի կառուցած թաղամասում ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը դեռեւս 2025 թվականի դեկտեմբերին մատչելի պայմաններով ձեռք էր բերել բնակելի տուն՝ թաունհաուս: Ուշագրավն այն է, որ Կոնջորյանը գույքը ձեռք էր բերել շուկայականից եւ նույնիսկ կառուցապատողի հայտարարած գնից էժան՝ մեկ քառակուսի մետրի համար վճարելով ընդամենը 300 հազար դրամ, այն դեպքում, երբ վաճառքի հայտարարված գինը կազմել էր 420 հազար դրամ:

Հետագայում պարզվել էր նաեւ, որ նույն կառուցապատողից բնակարան են ձեռք բերել նաեւ Հայկ Կոնջորյանի մայրը՝ Արմինե Կոնջորյանը, եւ քույրը՝ Օֆելյա Կոնջորյանը՝ հենց Հայկ Կոնջորյանի թաունհաուսի դիմաց:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ պարզելու, թե դատախազությունից ստացված գրությունն ի՞նչ ընթացքի մեջ է: Ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ այս պահին ստուգողական գործողություններ են իրականացվում:

Տեղեկացնենք, որ սա երկրորդ ստուգողական գործողությունն է Կոնջորյանի առանձնատան մասով. մեկն էլ սկսվել էր «Ժողովուրդ» օրաթերթի դիմումի հիման վրա: Սակայն ընթացքից դեռ նորություններ չկան:

Այսպիսով, մամուլի հրապարակմամբ բարձրացված հարցերն արդեն մտել են իրավապահ համակարգի քննության դաշտ:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանը Կոնջորյանի տան կոռուպցիոն թեմայի վերաբերյալ հարցին ագրեսիվ պատասխան էր տվել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողին՝ ասելով, թե «մակուլատուրան տպում, բերում եք Կառավարություն, տարեք իրավապահներին տվեք»: Տրված են, եւ իրավապահները մակուլատուրան ուսումնասիրում են:

Արդյոք ստուգողական գործողությունները կվերածվեն քրեական վարույթի, եւ արդյոք պաշտոնատար անձանց ու նրանց մերձավորների գույքային գործարքներում կոռուպցիոն բաղադրիչ կարձանագրվի, թե ոչ, ցույց կտա առաջիկա ընթացքը:

«Ժողովուրդ»-ը հետեւողական է այս թեմայի նկատմամբ»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՉ Է ԱՐԵԼ ՊԱՇԱՐՆԵՐ ԿՈՒՏԱԿԵԼ

Պետդեպարտամենտը կոչ է արել Իրանում գտնվող ԱՄՆ քաղաքացիներին ապաստան գտնել եւ պաշարներ կազմել սննդի ու դեղորայքի համար:

«Եթե որոշեք չօգտվել երկրից հեռանալու առկա տարբերակներից, այդ թվում՝ առեւտրային տարբերակներից, պետք է պատրաստ լինեք ապաստան փնտրել անվտանգ վայրում՝ ձեր տանը կամ այլ անվտանգ շենքում:

Պահեստավորեք սնունդ, ջուր, դեղորայք եւ այլ անհրաժեշտ իրեր», - ասվում է ԱՄՆ «վիրտուալ դեսպանատան» կայքում տեղադրված հայտարարության մեջ:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը երկուշաբթի օրը հայտարարել է, որ ԱՄՆ-ը եւ Իրանը շատ դրական եւ արդյունավետ բանակցություններ են վարել:

Նա նշել է, որ Պենտագոնին հանձնարարել է հինգ օրով հետաձգել Իրանի էներգետիկ ենթակառուցվածքների վրա հարվածները: Իրանի խորհրդարանի խոսնակ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը հայտարարել է, որ ԱՄՆ-ի հետ բանակցություններ չեն եղել, եւ որ կեղծ լուրերը ծառայում են շուկաները մանիպուլյացիայի ենթարկելուն:

ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է 70–Ի

Սուդանում հիվանդանոցի վրա կատարված հարվածի հետեւանքով զոհերի թիվը հասել է 70-ի, այդ թվում՝ 13 երեխայի, ասել է ԱՀԿ-ի՝ Սուդանում առողջապահական արտակարգ իրավիճակների ղեկավար Հալա Խուդարին:

«2026 թվականի մարտի 20-ի երեկոյան Էլ Դաեյն քաղաքի հիվանդանոցը հարված է ստացել: Սկզբնական հաղորդագրությունները ցույց են տվել 64 զոհվածի եւ 89 վիրավորի մասին: Որոնողական-փրկարարական աշխատանքների արդյունքում զոհերի թիվը հասել է 70-ի, այդ թվում՝ յոթ կնոջ եւ 13 երեխայի, մեկ բժշկի եւ երկու բուժքույրի», - ասել է նա Ժնեւում կայացած ճեպազրույցի ժամանակ:

Վիրավորների թիվը հասել է 146-ի, այդ թվում՝ հիվանդներին եւ նրանց ուղեկցող ընտանիքի անդամներին, ինչպես նաեւ ութ բուժաշխատողի: ԱՀԿ-ի տվյալներով՝ Էլ Դաեյնի հիվանդանոցը սպասարկում էր Արեւելյան Դարֆուրի ինը շրջանների մոտավորապես 2 միլիոն բնակչի: Դրա ավերումը զգալիորեն կրճատում է անհրաժեշտ բժշկական օգնության հասանելիությունը տարածաշրջանում, որը լրջորեն տուժել է 2023 թվականից ի վեր տեւող երկարատեւ հակամարտությունից:

ՊԱՐԶՎԵԼ Է

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ ԽՈՀԱՆՈՑԻ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ՆԵՏԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում բացառապես քննչական գործողությունների կատարման արդյունքում պարզվել է, որ 2022 թվականի հունվարի 21-ին տեղի է ունեցել ոչ թե ինքնասպանություն, այլ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված սպանություն:

Մասնավորապես քրեական վարույթի շրջանակում կատարված մեծածավալ ապացուցողական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ Ի.Ա.-ն 2020 թվականին ուսման նպատակով Վանաձորից տեղափոխվել է Երեւան եւ բնակություն հաստատել իրեն ու իր ընտանիքին հարազատ՝ ամուսիններ Ա.Թ.-ի եւ Ե.Մ.-ի բնակարանում՝ նրանց հետ միասին:

Դեպքին նախորդող օրը Ի.Ա.-ի եւ Ա.Թ.-ի միջեւ իրենց բնակության հասցեում տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում Ի.Ա.-ն բութ առարկայի առնվազն մեկ հարվածի արդյունքում ստացել է կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք, որից հետո ամուսինները վերը նշված բնակարանի խոհանոցի պատուհանից տուժողին դուրս են նետել, ինչի հետեւանքով վերջինս 2022 թվականի փետրվարի 10-ին մահացել է:

2026 թվականի մարտի 24-ին ամուսինների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (սպանությունը):

2026 թվականի մարտի 24-ին ամուսինների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (սպանությունը):

Ա.Թ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, իսկ Ե.Մ.-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԿԱՄԵՑՎԵԼ Է



ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի տեսուչներն անհատ ձեռնարկատեր Գեւորգ Տեր-Պետրոսյանին պատկանող հանրային սննդի օբյեկտում անցկացվող ստուգման ընթացքում պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով (ք. Գյումրի, Աբովյան 246/4):

Մասնավորապես՝

- սննդի կառույցն ապահովված չի եղել արհեստական օդափոխության համակարգով,
- պատերի որոշ հատվածներ չեն ունեցել հարթ մակերես, չեն պահվել նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից,
- առաստաղը չի պահվել նորոգ վիճակում, չի կանխարգելվել կեղտի կուտակման եւ մասնիկների թափվելու հնարավորությունը,
- աշխատանքային սեղանների մակերեւույթները չեն եղել հեշտությամբ մաքրվող եւ ախտահանվող:

Հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ՀԱՅՀՈՅԵԼ ԵՎ ՀԱՐՎԱԾԵԼ Է

Մարտի 7-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 11:50-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Շենգավիթի բաժին է դիմել Երեւանի բնակիչ 50-ամյա մի կին եւ հայտնել, որ 2 անչափահաս երեխաներ փորձում են ներխուժել թիվ 27 դպրոցի տարածք, դանակով վախեցրել ու հարվածել են պահակին: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված վայր մեկնած ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողներին 53-ամյա տղամարդը հայտնել է, որ ժամը 09:30-ի սահմաններում Արտաշիսյան փողոցի 52 հասցեում գտնվող Երեւանի թիվ 27 հիմնական դպրոցում նույն դպրոցի 9-րդ դասարանի աշակերտը վիճաբանության ժամանակ իր քրոջ հասցեին հնչեցրել է հայհոյանքներ, ապա բռունցքով մի քանի անգամ հարվածել է իր դեմքին եւ իրեն պատճառել ֆիզիկական ցավ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության Շենգավիթի ոստիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անչափահասը հանդիսանում է Երեւանի բնակիչ 16-ամյա Հ. Հ.-ն:

Նույն օրը երեկոյան Սարգիս Ս.-ն «ԳՈՒՎ» նախնական ախտորոշմամբ շտապօգնության բժիշկների կողմից տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տղամարդը աշխատում է Երեւանի թիվ 27 հիմնական դպրոցում որպես պահակ, իսկ նրա քույրը նշված դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողն է:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է

Մասիսում տղամարդը դանակահարել է նախկին կնոջը: 75-ամյա տղամարդը ձերբակալվել է: Պարզվել է, որ 75-ամյա տղամարդը ժամը 13:50-ի սահմաններում այցելել է Մասիսի Հանրապետության փողոցում բնակվող նախկին կնոջը եւ դանակահարել նրան: Ըստ նախնական տվյալների՝ դրդապատճառը խանդն է: 70-ամյա կինը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է:

75-ամյա տղամարդը ձերբակալվել է: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին, հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՁԵԼ Է ՓԱԽՈՒՍՏԻ ԴԻՄԵԼ

Մարտի 11-ին թմրանյութի հայտնաբերման դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:40-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնի ծառայողները Տիչինա փողոցի թիվ 93 հասցեի մոտից ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել եւ ոստիկանության Մալաթիայի բաժին են տեղափոխել Շիրակի մարզի բնակիչներ 25-ամյա Սեւակ Ն.-ին եւ 32-ամյա Գուրգեն Հ.-ին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վերջիններս երբ նկատել են, որ ոստիկանության աշխատակիցները մոտենում են իրենց, փորձել են դիմել փախուստի, եւ այդ ընթացքում Սեւակ Ն.-ն իր մոտից նետել է կասկածելի փաթեթ՝ լցված սպիտակավուն զանգվածով:

Դեպքի փաստով ոստիկանության Մալաթիայի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք ձերբակալվածների հետ միասին ներկայացվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Սեւակ Ն.-ն աշխատում է ՀՀ Պաշտպանության նախարարության N զորամասում որպես պայմանագրային զինծառայող:

ԲԱԽՎԵԼ ԵՆ

Մարտի 25-ին ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 11:00-ի սահմաններում Նոր Հաճն-Աբովյան ավտոճանապարհի Արզնու խճուղում բախվել են «Mercedes» եւ «ՎԱԶ 2106» մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, վթարի հետեւանքով 2 հոգի, որոնց առաջինն օգնության են հասել քաղաքացիներն ու ըստ քաղաքացիների հայտնածի՝ օպերատիվորեն ժամանած «Աբովյան» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը, տեղափոխվել են «Աբովյան» բժշկական կենտրոն: Բժիշկները վիրավորներին մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել:

Վթարի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են ավտոմեքենաների սեփականատերերի, վարորդների եւ վիրավորների ինքնությունը:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ «Mercedes»-ի վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է ոչ սթափ:

Քննիչի հանձնարարականով ավտոմեքենաները տեղափոխվում են ՊԾ Կոտայքի մարզի գումարտակի պահպանվող հատուկ տարածք:

● *Մարտի 23-ից 24-ը բացահայտվել է 2-ական դեպք՝ մարդու առեւանգման, խուլիգանության, պաշտոնական լիազորությունների չարաշահման:*

ՄԱՐԶ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզում թափառող, անտեր շների հիմնահարցը շարունակում է խիստ անհանգստություն պատճառել բնակիչներին: Տուրիստական մեծ համբավ ունեցող Դիլիջան քաղաքի բնակիչները մտահոգված են, որ իրենց փոքրահասակ երեխաները ցանկացած ժամանակ կարող են թափառող, անտեր շների հարձակմանը ենթարկվել:

Դիլիջան քաղաքի բնակչուհի Լիլիթ Ջամալյանն ասում է, որ թափառող, անտեր շները խիստ վտանգավոր են, անտեր շներն իրավունքներ ունեն, օրենքով պաշտպանված են, սակայն դիլիջանցի երեխաներն այդ շների ահից վախենում են Դիլիջանի փողոցները դուրս գալ, խաղալ, զբոսնել:

Դիլիջանի բնակչուհի Արմինե Գրիգորյանը հայտնում է, որ Դիլիջան քաղաքում մարդկանց վրա անտեր, սոված, կատաղած շների հարձակում կարող է լինել ամեն վայրկյան, ամեն կողմից, շների իրավունքներն ավելի պաշտպանվածեն, քան բնակիչներինը, այդ խնդիրը դարձել է անլուծելի:

Նշված հիմնահարցը վաղուց է առկա, սակայն Դիլիջանի համայնքապետարանը բավարար միջոցներ չի ձեռնարկում հիմնախնդիրը լուծելու կամ գոնե մեղմելու համար: Վերջին տարիներին Դիլիջան քաղաքում արձանագրվել են թափառող, անտեր շների հարձակումներ փոքրահասակ երեխաների եւ ծերերի նկատմամբ, շները կծոտել են երեխաների եւ չափահասների:

Թափառող շների հիմնախնդիրը առկա է նաեւ Տավուշի մարզի այլ բնակավարերում: Ծուրջ երկու շաբաթ է, ինչ Տավուշի մարզկենտրոն Իջեւանի քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում՝ Անկախության փողոցում, հայտնվել է մի սպիտակ շուն, որը հարձակվում է անցորդների վրա, պատռում նրանց իրերը: Իջեւանցիներն ասում են, որ շունը սոված է, մարդկանց վրա հարձակումներով իր համար կեր է հայթայթում: Այդ շունը հարձակվել է նաեւ Իջեւանի համայնքապետարանի 2 աշխատակցուհիների վրա, որից մեկի ձեռքի փաթեթում մոմեր են եղել, շունը դրանք հոշոտել է: Շունը պատռել է նաեւ համայնքապետարանի մյուս աշխատակցուհու ձեռքի փաթեթը, որտեղ թխվածքներ են եղել, կենդանին դրանք եւս կերել է: Իջեւանում անհանգստացած են այդ շան վարքից, հարձակումներից: Դրա նախադեպը եղել է, երբ անցյալ տարվա ամռանը Ռիժիկ անունով շունը Իջեւանում ագրեսիվ վարք էր ցուցաբերում, հարձակվում անցորդների վրա: 2025թ. հուլիսին հատուկ ավտոմեքենայով Ռիժիկին տեղափոխեցին Երեւան քաղաքում գործող շների կացարան: Իջեւանի համայնքապետարանը թափառող, անտեր շների ստերջացման ծրագրեր է իրականացրել, այդ թվում՝ Հայաստանում առաքելություն իրականացրած եվրոպական դիտորդների աջակցությամբ, սակայն թափառող, անտեր շների հիմնահարցը չի լուծվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ

ԲՆԱԿԱՐԱՆ, ՀՈՂԱՄԱՍ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Արամ Գուգարացը նշանակվել է Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ 2021 թվականի ապրիլի 23-ին:

Մինչ այդ, Armlur.am-ը պարզեց, որ նա տարբեր պաշտոններ է զբաղեցրել պետական համակարգում. 2021 թվականի փետրվարից մինչեւ ապրիլ եղել է Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի խորհրդական, 2020-2021 թվականներին աշխատել է «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ում՝ ղեկավարելով ծրագրեր, իսկ ավելի վաղ՝2017-2020 թվականներին, եղել է «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի առաջատար ինժեներ/համակարգող:

Armlur.am-ը ուսումնասիրեց պաշտոնյայի 2024 թվականի հայտարարագիրը եւ առանձնացրեց մի շարք ուշագրավ տվյալներ:

4 միավոր անշարժ գույք

Պարզվեց, որ Արամ Գուգարացը հայտարարագրել է մի քանի անշարժ գույք.

- 1/2բաժնային սեփականությամբ բնակարան Երեւանում՝ ձեռք բերված 2022 թվականին՝ ժառանգության կարգով,
- բաժնային հողամաս Երեւանում՝ նույնպես 2022 թվականին՝ ժառանգությամբ,
- 2024 թվականին նվիրատվությամբ ձեռք բերված մեկ բնակարան Երեւանում,
- 2024 թվականին ժառանգությամբ ձեռք բերված եւս մեկ բնակարան՝ 3/4բաժնային սեփականությամբ:

Այսպիսով, պաշտոնյան ընդհանուր առմամբ ունի 3 բնակարան եւ 1 հողամաս: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեկ տարվա ընթացքում երկու բնակարան է ձեռք բերել՝ ժառանգության եւ նվիրատվության կարգով:

Ինչ վերաբերվում է տրանսպորտային միջոցներին, ապա հայտարարագրում տրանսպորտային միջոց չի նշվել:

Դրամական միջոցներ

- Բանկային ավանդ՝2,000,000 դրամ,
- Բանկային հաշիվների մնացորդներ՝ 6,221 դոլար, 400,476 դրամ եւ 1,953,184 դրամ,
- Կանխիկ միջոցներ՝ 2,000 դոլար եւ 500,000 դրամ:

Եկամուտներ

Հաշվետու տարում նա ստացել է՝

- ժառանգություն՝6,200 դոլար,
- աշխատավարձ՝ Կադաստրի կոմիտեից՝ 11,020,305 դրամ:

Ընդհանուր եկամուտը կազմել է 13,479,101 դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԹՐԱՄՓԸ ԻՐԱՆԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից Իրանի համար ներկայացված, այսպես կոչված, 15 կետանոց «խաղաղության ծրագիրը» պաշտոնապես չի հրապարակվել, սակայն դրա որոշ մանրամասներ շրջանառվում են ամերիկյան եւ իսրայելական լրատվամիջոցներում:

Մասնավորապես, իսրայելական Channel 12-ը հայտնում է, որ առաջարկը ներառում է մի շարք խիստ պահանջներ Թեհրանի նկատմամբ:

Ըստ այդ տեղեկությունների՝

- Իրանի միջուկային օբյեկտները՝ Նաթանզում, Իսֆահանում եւ Ֆորդոյում, պետք է ապագործարկվեն եւ ոչնչացվեն,
- Իրանի միջուկային գործունեությունը պետք է ամբողջությամբ գտնվի International Atomic Energy Agency-ի վերահսկողության տակ,
- Իրանը պետք է հրաժարվի տարածաշրջանում իր զինված դաշնակիցներին աջակցելուց եւ նրանց ֆինանսավորումից,
- Պետք է ապամոնտաժվեն արդեն կուտակված միջուկային կարողությունները,
- Թեհրանը պարտավորվի երբեք չձգտել միջուկային զենքի ստեղծմանը,
- Իրանի տարածքում չպետք է իրականացվի ուրանի հարստացում, իսկ առկա հարստացված նյութերը պետք է հանձնվեն Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը,
- Հորմուզի նեղուցը պետք է մնա բաց եւ համարվի «ազատ ծովային գոտի»,
- Իրանի հրթիռային ծրագիրը պետք է սահմանափակվի քանակով եւ հեռահարությամբ՝ բացառապես ինքնապաշտպանական նպատակներով:

Միեւնույն ժամանակ, ըստ նույն աղբյուրների, ծրագիրը նախատեսում է նաեւ որոշ զիջումներ Իրանի համար: Դրանց թվում են՝

- ԱՄՆ աջակցությունը Բուշեհրում քաղաքացիական միջուկային էներգետիկ ծրագրի զարգացման համար,
- Իրանի դեմ կիրառվող բոլոր պատժամիջոցների վերացում,
- Պատժամիջոցների վերականգնման սպառնալիքի չեղարկում:

Բացի այդ, հաղորդվում է, որ հնարավոր է մեկամսյա հրադադար՝ բանակցությունների ընթացքում, սակայն այս տեղեկատվությունը եւս պաշտոնապես չի հաստատվել, եւ White House-ը դեռեւս չի մեկնաբանել այդ տեղեկությունները:

Ա. Վ.

● *Մարտի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել է 3-ը:*

ԼՈՒՐԵՐ

ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունը հայտնում է.

«Մենք այլեւս թույլ չենք լինի: Հենց նոր ստորագրեցինք հուշագիր հոլանդական Dyami անվտանգության հետախուզական ընկերության եւ հունական DRCS ընկերության հետ:

Սամվել Կարապետյանի վարչապետ դառնալուց հետո մենք փոփոխություններ ենք բերելու»: (Գ)

ՖԱՍԹ ԲԱՆԿԸ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ Է

Ֆասթ Բանկը թողարկել է 12 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով արժեկտրոնային կորպորատիվ պարտատոմսեր՝ 100 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով եւ 10-50% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվում են սույն թվականի մարտի 23-ից մինչեւ հուլիսի 31-ը:

Հավելենք, որ պարտատոմսերը թողարկվել են 24 ամիս (23.03.2028) մարման ժամկետով կիսամյակային վճարման պարբերականությամբ: Ի դեպ, ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված արտոնության համաձայն՝ պարտատոմսերից ստացվող եկամուտն ազատված է եկամտային հարկից մինչեւ 2027թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ֆասթ Բանկի կորպորատիվ պարտատոմսերը հնարավոր է ձեռք բերել ոչ միայն Բանկի 24/7 գործող մասնաճյուղերից, այլեւ հեռավար տարբերակով՝ Fast Bank Mobile հավելվածի կամ առցանց բանկինգի միջոցով: Ձեռք բերված պարտատոմսերն ու դրանց ողջ նկարագիրն արտացոլվելու է հավելվածի «Իմ պարտատոմսերը» բաժնում:

ՀՀ ԿԲ նախագահի 2026 թվականի հունվարի 29-ի թիվ 1/44Ա որոշմամբ գրանցվել է պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը:

Ծրագրային ազդագրի, Ազդագրի լրացման եւ Թողարկման վերջնական պայմանների թղթային տարբերակները կարելի է ձեռք բերել՝ այցելելով Ֆասթ Բանկի գլխամասային գրասենյակ կամ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

C360 ՔԱՐՏԵՐ

ՄԻ ՔԱՆԻ ՔԱՐՏ՝ ՄԵԿ ԳՆՈՎ

Քանի՞ վճարային քարտ եք օգտագործում առօրյա կյանքում... Միայն մե՞կը, իսկ հետո ամեն անգամ գումար եք կորցնում՝ փոխարկելով գումար արտերկրից առցանց գնումների կամ ադրանքի վերադարձի ժամանակ...

Թե՞ տարբեր արժույթներով մի քանի քարտ՝ անտեսելով հարմարավետությունն ու վճարելով մի քանի քարտի տրամադրման, սպասարկման վճար:

Կոնվերս Բանկը գտել է լուծումը. մեկ փաթեթ՝ մի քանի քարտով ու միասնական գնով, որն անհամեմատ ավելի ցածր է, քան կվճարեիք առանձին քարտերի համար:

Պատկերացրեք՝ օգտվում եք C360 Neo փաթեթից: Դրա շրջանակում ստանում եք 3 միջազգային եւ մեկ Արքա քարտ, ինչպես նաեւ 4 թվային քարտ Ձեր նախընտրելի արժույթով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո կամ ՌԴ ռուբլի:

Թաքնված վճարներ չկան. այսինքն 8 քարտի համար Դուք վճարելու եք ընդամենը ամսական 500 դրամ եւ խնայելու եք հենց այդ պահից:

Ինչու՞... Որովհետեւ այլ առաջարկների դեպքում.

- Քարտերից յուրաքանչյուրի տրամադրման համար հենց սկզբից միանվագ վճարելու եք գումար,
- 8 քարտի համար ամեն տարի վճարվելիք սպասարկման վճարը մոտ 50 տոկոսով գերազանցելու է Կոնվերս Բանկի առաջարկի տարեկան գինը:

Իսկ ինչու՞ 8 քարտ. որովհետեւ դրանք նախատեսված են տարբեր նպատակների եւ իրավիճակների համար.

- Հիմնական դրամային քարտ տեղական գնումների եւ անվճար կանխիկացումների համար
- Երկրորդ արտարժութային քարտ միջազգային գնումների համար, հատկապես՝ ճամփորդելիս
- Կից քարտ ընտանիքի անդամին
- Արքա քարտ տեղական գնումների եւ դրանցից հավելյալ 2% քեշբեք ստանալու համար
- Թվային քարտեր տարբեր արժույթներով հատկապես առցանց գնումների համար՝ տարանջատելու Ձեր միջոցները եւ դրանք առավել անվտանգ օգտագործելու համար:

Եւ այս ամենը՝ մեկ փաթեթում՝ ապահովելու Ձեր պահանջմունքների 360 աստիճան բավարարում: Ի դեպ, այս բոլոր քարտերին հասանելի է գործարքներից անվճար SMS ծառայություն:

Ողջ աշխարհում մարդիկ նախընտրում են փաթեթային առաջարկները. շահեկան է

ԱՄՆ-ում, համաձայն Experian data as of June 2025-ի, մեկ մարդուն միջինում բաժին է ընկնում 3.7 վճարային քարտ, Եվրոպայում ցուցանիշն էապես չի տարբերվում:

PYMNTS հետազոտությունը ցույց է տալիս, որ ողջ աշխարհում մարդկանց 57%-ը նախընտրում է բանկային ծառայությունների փաթեթները, երբ նրանք կարող են ստանալ մի քանի ծառայություն՝ մեկ առաջարկում:

C360-ը ոչ միայն քարտեր են

Յուրաքանչյուր փաթեթում կգտնեք այն, որն առավել հարմար է Ձեր ֆինանսական կարիքներին: Բացի քարտերից, Դուք ստանում եք՝

- Հաշվարկային եւ խնայողական հաշիվներ եւ տարեկան միչեւ 4,25% եկամուտ ստանալու հնարավորություն Ձեր ընթացիկ միջոցների դիմաց,
- ՀՀ-ում բանկոմատներից կանխիկացման 0% միջնորդավճար Կոնվերս Բանկի կողմից,
- 2% քեշբեք Արքա քարտերով,
- Անվճար քաղվածքներ եւ SMS ծանուցումներ,
- Վարկային սահմանաչափ՝ արտոնյալ պայմաններով,
- Կախված փաթեթից՝ նաեւ ճամփորդական ապահովագրություն, Fast Track եւ Business lounge-ից օգտվելու հնարավորություն, կոնսիերժ ծառայություն...

C360-ը բանկինգ է շատ ծառայություններով ու մեկ պարզ սակագնով եւ ցանկացած պահի upgrade-ի՝ ավելի ընդգրկուն փաթեթի անցնելու հնարավորությամբ:

Conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

«ԱՐՄԱՏ» ԱՆԳՐԱՎ ՎԱՐԿ

Գյուղատնտեսական բիզնեսի կայուն աճի համար Հայէկոնոմբանկը առաջարկում է «ԱՐՄԱՏ» վարկատեսակը:

Այն միջոցների ներգրավման հարմար եւ հասանելի տարբերակ է այն ֆիզիկական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար, ովքեր փնտրում են գյուղատնտեսական վարկ առանց գրավի ապահովման եւ մարման ճկուն գրաֆիկով:

Վարկը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Վարկի հիմնական պայմաններն են.

Վարկի արժույթ	AMD	USD
Վարկի գումար	300,000 – 3,000,000	700 – 7,000
Տարեկան անվանական տոկոսադրույք (6-12 ամիս)	14.5%	12.5%
Տարեկան անվանական տոկոսադրույք (13-48 ամիս)	16%	14%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	18.49% – 23.51%	16.20% – 21.21%
Վարկի ժամկետ	6 – 48 ամիս	6 – 48 ամիս

Ինչպե՞ս դիմել

«Արմատ» վարկատեսակն ստանալու համար հաճախորդները կարող են դիմել Հայէկոնոմբանկի «Աշտարակ», «Արարատ», «Արմավիր», «Արտաշատ», «Էջմիածին» մասնաճյուղեր:

Հայէկոնոմբանկը շարունակում է հավատարիմ մնալ տնտեսության իրական կարիքներից բխող իր ռազմավարությանը՝ առաջարկելով պրոդուկտներ եւ ծառայություններ, որոնք հիմք են ստեղծում տնտեսության երկարաժամկետ զարգացման համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից



●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՆՎԻՐՎԱԾ Է ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻՆ

Ֆրանսիայի Մարսել քաղաքում գործող Եվրոպական եւ Միջերկրածովյան քաղաքակրթությունների թանգարան (Mucem)-ը ներկայացրել է յուրահատուկ եւ խորքային ցուցադրություն՝ «Bonnes Meres» խորագրով, որը նվիրված է մայրության թեմային՝ դրա բազմաշերտ դրսեւորումներին արվեստում եւ հասարակական կյանքում: Ցուցահանդեսը ընդգրկում է շուրջ 4000 տարվա ժամանակաշրջան՝ միավորելով Միջերկրածովյան տարածաշրջանի մշակույթները եւ ներկայացնելով, թե ինչպես է մայրության կերպարը ձեւավորվել, փոխվել եւ վերաիմաստավորվել ժամանակի ընթացքում:



«Bonnes Meres» ցուցադրությունը միավորում է ավելի քան 350 աշխատանք եւ առարկա՝ներկայացված 20 երկրներից: Դրանց թվում են ինչպես հնագույն քանդակներ ու աստվածուհիների պատկերներ, այնպես էլ ժամանակակից արվեստի գործեր, որոնք անդրադառնում են մայրության իրական, երբեմն՝ բարդ եւ հակասական կողմերին: Ցուցադրության զգալի մասը՝ շուրջ 120 նմուշ, պատկանում է հենց Մարսելի թանգարանի հավաքածուին:

Ցուցահանդեսի առանցքում ոչ միայն մայր-երեխա կապն է, այլեւ մայրության սոցիալական եւ քաղաքական նշանակությունը: Կուրատորները փորձել են հեռանալ «իդեալական մայր» միակողմանի պատկերից եւ ներկայացնել մայրության բազմազան փորձառությունները: Ինչպես նշում է ցուցադրության համակուրատոր Անն-Սեսիլ Մայլֆեր-ը, մայրությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես ընտանեկան, այլեւ որպես հասարակական երեւույթ, որը մեծ ազդեցություն ունի մեր հասարակությունների ձեւավորման վրա:

Ցուցադրության անվանումը՝ «Bonnes Meres», հատուկ ընտրված է՝ հակադրելու Մարսելում հայտնի «Լա Բոն Մեր» (Սուրբ Մայր) խորհրդանիշին, որը համարվում է քաղաքի պահապանը: Սակայն այս նախագծում «լավ մայր» հասկացությունը ներկայացվում է բազմակի ձեւով՝ընդգծելով, որ մեկ կին կարող է մարմնավորել մայրության տարբեր դրսեւորումներ եւ զգացողություններ:

Ցուցահանդեսի առաջին հատվածում ներկայացված են հնագույն քարե աստվածուհիներ, որոնք խորհրդանշում են մայրությունը որպես կյանքի աղբյուր եւ պաշտամունքային արժեք: Սակայն ցուցադրության ընթացքում այցելուն աստիճանաբար տեղափոխվում է ավելի իրական եւ մարդկային հարթություն, որտեղ մայրությունը ներկայացվում է ոչ թե իդեալականացված, այլ՝ իրական փորձառությունների միջոցով:

Հատուկ ուշադրություն է դարձվում այն թեմաներին, որոնք հաճախ մնում են լռության մեջ: Ցուցադրությունը բացահայտորեն անդրադառնում է պերինատալ վշտին, անպտղության ճանապարհի միայնությանը, հղիության ընդհատումներին եւ այլ զգայուն հարցերին: Այսպիսով, արվեստը դառնում է հարթակ՝ խոսելու այն մասին, ինչը երկար ժամանակ եղել է փակ եւ անձնական:

Ցուցահանդեսը ոչ միայն պատմական հետահայաց է, այլեւ սոցիալական հայտարարություն: Այն նպատակ ունի խթանել հանրային քննարկում մայրության դերի, կանանց վիճակի եւ հասարակության մեջ նրանց ունեցած ազդեցության վերաբերյալ: Կուրատորները հույս ունեն, որ այս նախագիծը դուրս կգա թանգարանի պատերից եւ կդառնա լայն քննարկման առիթ:

«Bonnes Meres»-ը նաեւ յուրատեսակ հարգանքի տուրք է մայրերին՝ իրենց բոլոր դրսեւորումներով՝ ուժեղ, խոցելի, հոգատար, երբեմն նաեւ պայքարող: Այն առաջարկում է նոր հայացք նետել մայրությանը՝զերծ կարծրատիպերից եւ մոտ իրականությանը՝ իր ամբողջ բարդությամբ ու անկեղծությամբ:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ 2026 թվականի օգոստոսի 31-ը՝ հնարավորություն տալով այցելուներին վերաիմաստավորել մայրության գաղափարը եւ տեսնել այն նոր լույսի ներքո:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՁԳՏԵԼՈՒ Է ՀԱՂԹԵԼ

Հայաստանի ֆուտբոլի հավաքականի կիսապաշտպան Նարեկ Գրիգորյանը խոստովանել է, որ ձգտելու են հաղթանակ տոնել Բելառուսի ընտրանու նկատմամբ:

«Բոլորս լավ տրամադրությամբ մարզվում ենք ու պատրաստվում բարձր մակարդակով անցկացնել խաղն ու անպայման հաղթել: Բնականաբար, շատ կարեւոր է ընկերական հանդիպումներ անցկացնելը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս իրար լավ հասկանալ: Կարեւոր է նաեւ կատարել ու հասկանալ մարզչի պահանջները, որովհետեւ նա այդքան էլ շատ ժամանակ չի անցկացրել թիմի հետ: Մարզավիճակս լավ է ու կփորձեմ օգնել հավաքականին»,- Գրիգորյանի խոսքերը մեջբերում է ՀՖՖ-ն:

Հայաստանի հավաքականը մարտի 29-ին Երեւանում ընկերական հանդիպում է անցկացնելու Բելառուսի հետ: Խաղի սկիզբը 18:00-ին է:

ՍԱԼԱՀԸ ՈՐՈՇԵԼ Է ՀԵՌԱՆԱԼ



Մոհամեդ Սալահը ակումբի հետ մինչեւ 2027 թվականը պայմանագիր ունի, սակայն որոշել է ավելի շուտ լքել այն:

«Ցավոք, այդ օրը եկավ: Ուզում եմ ասել, որ երբեք չէի կարող պատկերացնել, թե որքանով այս ակումբը, մարդիկ եւ քաղաքը կդառնան իմ մի մասը: «Լիվերպուլ»-ը պարզապես ֆուտբոլային ակումբ չէ, այն կիրք է, պատմություն եւ ոգի: Այդ ամենը բառերով բացատրել չեմ կարող», - սոցիալական ցանցերում գրել է հարձակվողը: «Լիվերպուլ»-ն իր պաշտոնական կայքում եւս հաստատել է տեղեկությունը:

Սալահը «Լիվերպուլ»-ի կազմում հանդես է գալիս 2017 թվականից եւ թիմի կազմում 435 խաղ է անցկացրել, դարձել 255 գոլի եւ 122 գոլային փոխանցման հեղինակ: Սալահը 4 անգամ ճանաչվել է Պրեմիեր Լիգայի լավագույն ռմբարկու: Նա Անգլիայի կրկնակի չեմպիոն է, ակումբի հետ տիրացել է Անգլիայի գավաթին եւ Լիգայի գավաթին, հաղթել Չեմպիոնների Լիգայում եւ Աշխարհի ակումբային առաջնությունում:

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐ

Հայ գրոսմայստեր Հայկ Մարտիրոսյանը հաջող ելույթ է ունենում Տաշքենդ-ում անցկացվող Agzamov Memorial շախմատի միջազգային մրցաշարում՝ նախավերջին խաղափուլից առաջ զբաղեցնելով միանձնյա առաջատարի դիրքը: Մրցաշարի 8-րդ խաղափուլում Մարտիրոսյանը կարեւոր հաղթանակ տարավ՝առավելության հասնելով ուզբեկ գրոսմայստեր Աբդիմալիկ Աբդիսալիմովի նկատմամբ: Այս հաղթանակը թույլ տվեց հայ շախմատիստին ամրապնդել իր դիրքերը մրցաշարային աղյուսակում եւ առավել վստահ մոտենալ եզրափակիչ փուլին:

Նրա գլխավոր հետապնդողները հետ են մնում ընդամենը կես միավորով, ինչը խոսում է պայքարի լարվածության մասին: Մարտիրոսյանին անմիջապես հաջորդում են ՖԻԴԵ-ն ներկայացնող գրոսմայստերներ Արտյոմ Ուսկովը եւ Նիկիտա Աֆանասեւը, ինչպես նաեւ Ուզբեկստանը ներկայացնող միջազգային վարպետներ Մուհամմադզոխիդ Սույարովը եւ Բախրոմ Բախրիլլաեւը:

Մրցաշարի վերջին խաղափուլը վճռորոշ կլինի՝ պարզելու հաղթողին: Հայկ Մարտիրոսյանի համար սա կարեւոր հնարավորություն է ոչ միայն մրցանակային տեղ զբաղեցնելու, այլեւ միջազգային ասպարեզում հերթական հաջողությունն արձանագրելու համար:

ԱՄՍՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉ

Իսպանիայի գործող չեմպիոն «Բարսելոնա»-ի գլխավոր մարզիչ, 61-ամյա գերմանացի մասնագետ Հանս-Դիտեր Ֆլիկը ճանաչվել է Լա Լիգայի մարտ ամսվա լավագույն մարզիչ: Մրցանակը լիովին արդարացված է թիմի տպավորիչ ելույթներով. մարտ ամսվա ընթացքում կատալոնական ակումբը անցկացրել է երեք հանդիպում եւ բոլորում էլ տարել հաղթանակ: «Բարսելոնան» նվազագույն հաշվով առավելության է հասել «Աթլետիկ Բիլբաո»-ի նկատմամբ (1:0), ապա դիտարժան խաղում հաղթել է «Սեւիլյա»-ին (5:2), իսկ վերջում կրկին 1:0 հաշվով առավելության է հասել «Ռայո Վալիեկանո»-ի նկատմամբ: Այս հաջողությունների շնորհիվ «Բարսելոնան» 73 միավորով շարունակում է գլխավորել մրցաշարային աղյուսակը՝ 4 միավոր առաջ լինելով իր գլխավոր մրցակցից՝«Ռեալ Մադրիդ»-ից:

Լավագույն մարզչի կոչման համար պայքարում Ֆլիկը գերազանցել է նաեւ ուժեղ մրցակիցների: Քվեարկության արդյունքում նա առաջ է անցել Դիեգո Սիմեոնեից, որի գլխավորած «Աթլետիկո Մադրիդ»-ը մարտին գրանցել է 2 հաղթանակ եւ 1 պարտություն, ինչպես նաեւ Լուիշ Կաշտրուից, որի ղեկավարած «Լեւանտե»-ն ունեցել է 2 հաղթանակ եւ 1 ոչ-ոքի:

Ֆլիկի ղեկավարությամբ «Բարսելոնան» շարունակում է վստահ քայլերով շարժվել դեպի հերթական չեմպիոնությունը՝ ցուցադրելով կայուն եւ արդյունավետ խաղ:

● *Հովհ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում մարտի 26-ին տեղի կունենա «Սուտլիկ որսկանը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Երեւանում մեքենան կայանելուց հետո մոտեցել է մի անձ եւ գումար է պահանջում կայանման համար. ի՞նչ անել նման դեպքում:

Դավիթ Սուրենյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկ է նախ արձանագրել, որ ճանապարհային երթեւեկության կանոններով սահմանված է, որ ընդհանրապես տրանսպորտային միջոցը տեղակայել եւ կայանել թույլատրվում է երթեւեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով, այնտեղ, որտեղ առկա է համապատասխան ճանապարհային նշան կայանում կատարելու վերաբերյալ: Այն ավտոկայանատեղին, որի համար նախատեսվում է վճարի գանձում, պետք է առանձնացված լինի ցուցանակներով եւ կարմիր գույնի գետնանշումով, իսկ վճարի չափն էլ սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ:

Այսինքն, այն ավտոկայանատեղիներում, որտեղ առկա չեն կարմիր գույնի գետնանշումներ, դրանք վճարովի չեն եւ դրանց համար քաղաքացիները չպետք է կատարեն որեւէ վճարումներ: Իհարկե, բացառություն են կազմում այն դեպքերը, երբ համայնքի ավագանու որոշմամբ համայնքին պատկանող այս կամ այն փողոցի հատվածները կամ այլ ավտոկայանատեղիները վարձակալությամբ հանձնված են մասնավոր կազմակերպությունների օգտագործմանը՝ իրենց կազմակերպության գործունեության պատշաճ կազմակերպման համար:

Հարկ է ընդգծել, որ կարմիր գույնի գետնանշումով առանձնացված ավտոկայանատեղիներում ավտոմեքենան կայանելու համար վճարներ գանձելու նպատակով դրանք չեն հսկվում որեւէ աշխատակցի կողմից, դրանց համար վճարները չեն գանձվում կանխիկ: Կայանատեղիի համար վճարումների չափերն ու ձեւերը հստակ նշված են համապատասխան ցուցանակների վրա (կատարվում են բանկում կամ sms կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով): Եթե կարմիր գույնի գետնանշումով ավտոկայանատեղիում ավտոմեքենա կայանելու ժամանակ ինչ-որ անձ է մոտեցել եւ գումար է պահանջում, կարող եք մերժել նրա պահանջը՝ հայտնելով, որ դրա համար վճարման կարգը sms կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով է կատարվում կամ բանկում: Միաժամանակ, պահանջեք ներկայանալ եւ հայտնել, թե որ կազմակերպության աշխատակիցն է հանդիսանում: Իսկ եթե այն վայրը, որտեղ կայանել եք Ձեր ավտոմեքենան, կարմիր գույնի գետնանշումներով նշված չէ, եւ ինչ-որ անձ Ձեզանից գումար է պահանջում կայանման համար, ապա նախ նրանից պահանջեք Ձեզ տրամադրել տեղեկատվություն ավտոկայանատեղիի համար վճար գանձող կազմակերպության եւ վճարի չափի մասին, պահանջեք նրանից հայտնել իր անուն-ազգանունը եւ այն կազմակերպությունը, որտեղ նա աշխատում է: Այդ տեղեկությունները հայտնելուց հետո կարող եք դրանց իսկությունը ստուգել՝ զանգահարելով Երեւանի քաղաքապետարանի կամ մարզպետարանների թեժ գիծ՝ խնդրելով հայտնել, թե կոնկրետ փողոցի այդ հատվածում գտնվող ավտոկայանատեղին տրամադրվե՞լ է արդյոք որեւէ մասնավոր կազմակերպության, թե՞ ոչ:

Տեղական ինքնակառավարման մարմին

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խանութից անհայտ կաթնամթերք եմ գնել, որի օգտագործումից ինքնազգացողությունս վատացել է: Ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Գագիկ Աբրահամյան, 71 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. (Սկիզբը՝նախորդ համարում) Փաթեթավորման պետք է գրված լինի արտադրողի եւ վաճառողի գտնվելու վայրը, այն կազմակերպության գտնվելու վայրը, որը լիազորված է սպառողներից բողոքներ ընդունել, եւ օրենքով սահմանված այլ տեղեկություններ: Եթե Ձեր կողմից գնած կաթնամթերքի փաթեթավորման վրա առկա չեն վերոնշյալ տեղեկությունները կամ դրանց մի մասը, ապա առկա է խախտում արտադրողի կամ վաճառողի կողմից:

Նման իրավիճակում, կախված Ձեր ինքնազգացողության վատթարացման աստիճանից, նախ խորհուրդ է տրվում դիմել շտապ-բուժօգնություն ծառայությանը՝ զանգահարելով 1-03, այնուհետեւ անհրաժեշտ է անմիջապես դեպքի մասին ահազանգել ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն կամ զանգահարել վերջինիս թեժ գծի հեռախոսահամարով:

Ձեր բողոքների մասին կարող եք բարձրաձայնել նաեւ՝ դրանք էլեկտրոնային փոստով ուղարկելով ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բացի այդ, Դուք կարող եք այդ ապրանքի վերաբերյալ Ձեր բոլոր բողոքները հայտնել այն խանութի տնօրինությանը, որտեղից գնել եք այն՝ ներկայացնելով ապրաքնի համար վճարման անդորրագիրը: Իսկ Ձեր առողջությանը անորակ սննդամթերքի արդյունքում վնաս պատճառվելու դեպքում կարող եք վնասները գանձելու պահանջով դիմել դատարան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Առինջ բնակավայրում ստեղծվել է կեղտաջրերի «մինի լճակ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 + 3 + 8 + 12
	Կոտայքի լեռներ	0 + 3 + 7 + 10
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +11 + 14
	Գեղարքունիք	0 + 3 + 8 + 11
	Լոռի	+ 3 + 7 + 10 + 13
	Տավուշ	+ 2 + 5 +11 + 13
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 6 + 9
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 +10 + 15

	Արարատ	+ 5 + 8 +12 + 15
	Արմավիր	+ 6 + 9 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 6 + 9
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +12 + 16
	Սյունիքի լեռներ	0 + 3 + 6 + 9
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +13 + 16
	Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +19 + 22
	Երեւան	+ 6 + 8 +13 +15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.03.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*